

Մեղեռնի սուրբ Լուսատուին Մովսէս քերթողին ողբել 1.

(Տ ա ղ ճ Խ Է .)

Ո՛վ արքայակերպ տէր բահանայապետ,  
սուրբ եւ հովիւ բարի. ո՞ր յերկնայինսըն նը-  
մանեալ հրեշտակատեսիլ.

Երբզեմօք քեզ ըզերզարս, քեզ ըզերզարս երգե  
մքք, քեզ ըզերզարս, զերզարս երբզեմօք քեզ  
ըզերզարս:

Եւ իշըրթանց քոց բողիսեալ ջուր կենդանի  
երանգ երանգ. երբընեբրական ծաղկաբ.  
երբզեմօք քեզ ըզերզարս. քեզ ըզերզարս...  
Վասնորոյ եւ զբառիցն անտարանեն գետք  
զանուշն եւ զասօզտակարն. արբուցանելով ըզ-  
պասքումին ծարաւեսց.

Երբզեմօք քեզ...

Ե . Բ .



Պ Ո Ղ Ի Կ Բ Ա Տ Է Ս Ի Մ Ա Տ Ա Ն Ի Ն <sup>2</sup>  
ԵՈՒՆԻՍ

Տանիքի վերայ նա բարձր կանգնած  
նայում էր, հոգին հրճուանքով լցուած,  
իրեն հպատակ շքեղ Սամուսին:

« Հրնագանդ է ինձ այս ամէնը, տես.  
Խոստովանիր, որ երջանիկ եմ ես, —  
եւ Եգիպտոսի ասաց արքային:

« Վայելում ես դու երկնից շընորհներ —  
Ահա վաղեմի քո բաղդակիցներ

Քո զայիսոնի ուժիցն ընկճուեցան:  
Բայց կայ վրիժառու մէկը տակաւին.  
Եւ մինչ կենդանի է քո թշնամին,  
Երջանիկ քեզ չի ասիլ իմ՝ բերան: »

Եւ դեռ չէր արքան իւր խօսքն ասարտած,  
Ահա Միլետից հրեշտակն ուղարկուած  
եկաւ, անտիք բերեց իշխանին.

« Թող, տէ՛ր, բորբոքուի զոհերի ճենճեր, \*  
Եւ դաւարագեղ զրարթ դափնիներ  
Հիսուին փառաւոր պըսակ քո գլխին:

« Տիգանար արդէն ընկաւ թշնամիդ.  
Հաղորդում է այս լուրն ուրախատիթ  
Պոլիդորն ազնիւ, զօրավարը քաջ: »

Ասում է, բանում՝ նա մի սեւ անօթ, —  
Եւ արինաթաթախ զըլուխը ծանօթ  
Սոսկալով տեսան նրանք իրանց առաջ:

Եւ սարսուռ զգաց, նահանջեց արքան.  
« Բայց մի՛ հաստար դու երջանկութեան, —  
Մտահոգ ասաց իւր ըարեկամին.

« Հարուստ նաւերիդ — այդ մի՛ մոռանայ —  
Բաղդըն է լողում նենգ ալեաց վերայ.  
Կը փշրէ՛ նոցա փոթորիկն ուժգին: »

Եւ հագիւ թէ՛ նա իւր խօսքն ասարտեց,  
Մի ուրախ զանչին նորան ընդհատեց,  
Որ ծովեզերքից հասաւ թնդալով.  
Ծանրացած զանձով օտար աշխարհի  
Դառնում են արա երկիրն հայրենի  
Նաւերն՝ իբր անտառ խիտ խիտ կայմերով:

Ապշեցաւ մընաց ու ասաց արքան.  
« Յաջողում է քեզ այսօր ամէն ըան.  
Բայց ըզգուշացիր յեղյեղով բաղդից —  
Ահա կրետացոց գնդեր զինաւառ  
Պատրաստում են արդ վրտանգ քեզ համար.  
Արդէն հեռու չեն նոքա այս ափից: »

Եւ խօսքը բերնից դեռ նոր դուրս եկած՝  
Տեսան նաւերի դրօշները պարզած.  
« Յաղթուի՞նք, » — հազար ձայներ գոչեցին —  
« Այլ եւս թշնամու չըկան արհաւիրք.

Կրետացիներին ցրուեց փոթորիկ,  
Եւ հասաւ վախճան գոռ պատերազմին: »

Սարսափով լսեց հիւրն այս անտիք.  
« Ի՞րան, պիտի քեզ ասեմ՝ երջանիկ:  
Վախում եմ՝ սակայն ես կեանքիդ համար.  
Աստուածոց նախանձն արհելի է միշտ,  
Եւ ուրախութիւն ոչ երբէք անվիշտ  
Հողածնի բաժին տեսել է աշխարհ:

« Յաջողում էր միշտ ի՛նձ եւս ամէն ըան.  
Բոլոր գործերումս ինձ միշտ անբաժան  
Հովանաւոր էր շընորհն երկնային:  
Սակայն ո՞նէի ժառանգ սիրասուն —  
Ես տեսայ նորա մահն անազորոյն.  
Պարտքըս հատուցի իմ՝ ճակատագրին:

« Արդ ազատ լինել թէ՛ կամիս ցաւից,  
Աղաչիր անմահ դու աստուածներից

1. Այս բառը ջնուած է եւ լաւ չէ կարդացուում:  
2. Der Ring des Polykrates.

Շընորհել եւ վիշտ ընկեր քո քաղղին-  
ես դեռ չեմ տեսել որ մէկի վերան  
Միշտ լիածեղըն մինչեւ իւր վախճանն:  
Աստուածներն ուրախ պարգեւ թափէին:

«Եւ թէ չէ լսում աստուած քո խնդիր,  
Դու քարեկամիդ խըրատին միտ դի՛ր-  
ինքըդ քո գլխին կոչի՛ր դու փորձանք,  
Եւ զանձերիդ մէջ եթէ պատուական,  
Սրտիդ սիրելի դու ունիս մի քան,  
Չգի՛ր թո՛ղ տանի այս ծովի յորձանք:»

Եւ Պոլիկրատէս սուկալով ասաց.  
«Իմ այս մատանին կղզում մթերուած  
Բոլոր զանձերիցս է ինձ սիրելի.  
Կամ իմ այս զոհել ես աստուածներին —  
Թերեւս հաշտ աչքով նայեն իմ քաղղին:»  
Եւ ծովն է նետում զոհարն իւր մատի:

Դեռ նոր էր քացուել յաջորդ առաւօտ,  
Մի՛ջձկնորս մտաւ թագաւորի մօտ,  
Եւ ուրախութիւն փայլում էր դէմքին.  
«Տէ՛ր» այս ծովն այսօր ընկաւ իմ ուռկան,  
Չեմ՝ ընկել դեռ մինն ես սորա նըման.  
Այս ընծայ քերի քեզ, իմ իշխանին:»

Եւ երբ խոհարարն ծուկը կոտորեց,  
Թագաւորի մօտ ապշած նա շտապեց  
Եւ խիստ զարմանքով զոչեց ու ասաց.  
«Տէ՛ր» ահա տես քո սիրած մատանին,  
Գըտայ նոր քերած ես ծըկան փորին:  
Ո՛հ, ինչ անսահման քաղղ է քեզ շնորհուած:»

Եւ հիւրը դարձաւ սրտումն ահուդող.  
«Էլ այստեղ,» — ասաց, — մընալ չեմ կարող.  
Այլ ես քարեկամ դու չես ինձ համար —  
Կորուսող են խնդրում աստուածներն երկ-  
նից:»  
Փախչում եմ՝ քեզ հետ մե՛ռնելու վտանգից:»  
Եւ շուտ նա նստաւ ընկաւ ճանապարհ:

Յ. ՅՈՂԱՆՆՈՍՏԱՆ.

ՆՈՐԱԳԻՒՏ ՍԵՊԱՉՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԵԱՆ.

Արդեւաշատ խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Յուսալով որ՝ խմբագրութիւնդ կը ցան-  
կայ զարգարել Արարատի էջերը Հայաստա-  
նում գտնուած հուրթեանց նշխարներով ա-  
հա յանձնում եմ խմբագրութեանդ տասն-  
տողեան մի նորագիւտ սեպաձև արձանագրու-  
թիւն, որը մեր յանձնարարութեամբ հարցնե-  
լով գտել է Մօլլա-Բայազիտ գիւղի Արժ.  
Յովհաննէս քահանայն Տէր Յակոբեան Ար-  
ուանդակերտի (Ղարաղալայ) բերդի հանդէպ՝  
Արասիի ձախ ափին մի քարափի վերայ:

Այդ արձանագրութիւնն օրինակելու հա-  
մար անձամբ զնացի գտնուած տեղը և մեծ  
դժուարութեամբ քարափների վրայից անցնե-  
լով հազիւ կարողացայ օժանդակութեամբ յիշ-  
եալ Յովհաննէս քահանայի Արմաւիրցի պա-  
րոն Մարտիրոս Արարապետեանի և տիրացու  
Մարտիրոս Արիստակէսեանի հասնել արձա-  
նագրի գտնուած տեղը և մտնելով մի քարա-  
փի ներքեւ տեսնել և օրինակել:

Ուղարկելով խմբագրութեանդ նորագիւտ  
Արուանդակերտեան այս արձանագրութիւնը՝  
յուսով եմ որ Արարատի միջոցաւ կը հրատա-  
րակէք ի գիտութիւն Աւրուպացի բեւեռագրով  
պարապողների: Յաւելում թէ՛ այս արձանագրի  
թէ՛ սխտուածքը և թէ՛ տառերը բոլորովին նման  
են Արմաւիրի արձանագրութեանց. ինչպէս  
համեմատողը կարող է պարզ տեսնել:

Գուշակելով որ Արուանդակերտի շրջա-  
կայքում պէտք է այդպիսի արձանագրու-  
թիւններ գտնուին այլ ևս, յանձնարարեցի  
ու՛մ անկ էր հետամուտ լինել բեւեռագիր ար-  
ձանագրութեանց, խոստանալով միանդամայն  
դրամական վարձատրութիւն այդպիսի աշխա-  
տանքների համար:

Այս և՛ ասեմ որ արձանագրարը այն-  
պէս նեղ ծերպի մէջ է, որ անհնար է լուսա-  
նկարով արձանագրի պատճէնը հանել. գուցէ